

ԳԼՈՒԽ ԻԱ

Առաւօտուն երբ արթնցաւ Գրիգոր, ձմեռուան արեւու ճառագայթները սենեկին պատուհանները կը լուսաւորէին. Աղթամարայ ծովակը կը փալփիւր, բնութիւնը կենդանութիւն էր առէր: Շուտ մը ելաւ, եւ երբ հագուելու եղաւ զարմանքով տեսաւ, որ իւր տխուր զգեստներն անհետացեր եւ տեղը իշխանագնի մը վայել զգեստներ դրուած էին:

Յայտնի էր, թէ Սէթայ չէր կ'ամեցեր, որ իր հիւրը ստորին վիճակի մարդկանց զգեստներով երեւա, ուստի հագուեցաւ եւ բնական գաղտնի գոհութեամբ նաեւ, վասնզի սիրահար երիտասարդ ինչչա՛փ փիլիսոփայ որ լինէր՝ Թենիի վայելուչ երեւելի կը փափագէր:

Բայց երբ դահլիճը մտաւ՝ զարմանքով մնաց, իշխանուհուոյն քով նստած էր Ատոմ Շահունի եւ սոցայ քով Թենի: Գրիգոր որ ամենխին տեղեկութիւն չունէր ծեր զօրավարին եւ Ռշտունեաց Օրիորդին մտերմութեան եւ չէր կրնար ըմբռնել այդպիսի ընտանութիւն վասնզի դաժան ծերուն երկայն, չոր եւ դեղնած մատներուն մէջ կորած կը տեսնէր աղջկան փափուկ ձեռքը, եւ ինչչա՛փ պիտի զարմանար եթէ մէկն ականջէն գար ըսէր թէ՝ «Այդ ահարկու ծերը միայն գիտէր իրենց սիրոյն գաղտնիքը»: Բայց առանց յայտնի ընելու իւր զարմանքը՝ ողջունեց յարգանօք, գլուխը վեր առնելով՝

– Զօրավար,— ըսաւ,— կը ճանչե՞ս Մամիկոնեան Գրիգոր իշխանը, Դաւթի որդին:

Ատոմ՝ րոպէ մը զննելէն վերջ՝ իւր քաղցր ձայնով՝

– Տղա՛յ,— ըսաւ,— դու Սարեակի պատերազմին չէի՞ր Կամսարական Սուրենի հետ:

– Այո, զօրավար:

– Ես քեզ կը յիշեմ, դու լաւ կը ռուեցար կարիքիդ համեմատ: Այս գովութիւնն ընելէ վերջ՝ վայրկեան մը կեցաւ ծերը՝ եւ

Թենիին դառնալով, աւելցուց.

– Լաւ՛ տղայ է: